ԻՆՉ ԵՔ ՏԵՍՆՈՒՄ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՀԱՅ. 1:4-13

4 Հովհաննեսից՝ Ասիայում գտնվող յոթ եկեղեցիներին, շնորհք լինի ձեզ հետ եւ խաղաղություն նրանից որ է, եւ որ էր, եւ որ գալու է, եւ այն եօթը Հոգիներից, որ նորա աթոռի առաջին են. 5 Եւ Հիսուս Քրիստոսից՝ հավատարիմ վկայից, որ անդրանիկն է մեռելներից և իշխանը երկրի թագավորների: Նա, որ սիրեց մեզ ու մեզ ազատեց մեր մեղքերից իր արյամբ: 6 Եւ մեզ թագավորներ եւ քահանաներ դարձրեց Աստուծո եւ իր Հօր համար. նորան փառք եւ զօրություն հավիտեանս յավիտենից. Ամէն:

*7 Ահա նա գալիս է ամպերով. եւ **ամեն աչք կ'տեսնէ նորան**, եւ նորանք որ խոցեցին նորան. եւ և նրա վրա պիտի ողբան երկրի բոլոր ազգերը. Այո, Ամէն: 8 Ես եմ Ալֆան եւ Օմեգան [սկիզբը եւ վերջը] ասում է Տէրը, նա որ է եւ որ էր եւ որ գալու է, Ամենակալը:*

9 Ես՝ Հովհաննեսս՝ ձեր եղբայրը, Հիսուսով ընկերակիցը նեղության, արքայության և համբերության, Աստծու խոսքի և Հիսուս Քրիստոսի վկայության համար եղա Պատմոս կոչված կղզում: 10 Եւ կիրակի օրը լցվեցի Հոգով և իմ հետևից փողի ձայնի պես մի բարձր ձայն լսեցի, Ես եմ Ալֆան եւ Օմեղան, առաջինը եւ վերջինը, 11 որ ասում էր. Ինչ որ տեսնում ես, գրի՛ր գրքում և ուղարկի՛ր Եփեսոսում, Զմյուռնիայում, Պերգամոնում, Թիատիրայում, Սարդիսում, Փիլադելփիայում և Լաոդիկիայում գտնվող յոթ եկեղեցիներին:

12 Եւ ես ետ դարձա այն ձայնը տեսնելու, որ ինձ հետ խօսում էր, եւ երբոր դարձա եօթը ոսկի ճրագակալ տեսա. 13 Եւ այն եօթը ճրագակալների միջումը մէկը մարդի Որդու նման, պճղնաւոր պատմուճան հագած, եւ ստինքների մօտ ոսկի գօտի կապած:

- ***Այսօր ես կցանկանայի քննարկել Աստծո Խոսքի երեք հիմնական սկզբունքները՝ լսել, տեսնել և հռչակել:***

  3 Երանելի են այս մարգարէութեան խօսքերը կարդացողը եւ լսողները, եւ սորանում գրուածները պահողները. որովհետեւ ժամանակը մօտեցել է:

Հեսու 10:12 – Հեսուն խոսեց Տիրոջ հետ և իսրայելացիների առաջ ասաց. Արեգա՛կ, Գաբավոնի վրա՛ կանգնիր, և դու, լուսի՛ն, Այեղոնի ձորի վրա՛ կանգնիր:

Դ Թագ. 20:11 – Եսայիա մարգարեն Տիրոջը կանչեց, և ստվերը տասը աստիճան ետ դարձրեց այն աստիճաններից, որ իջել էր Աքազի աստիճաններով:

I. ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՏԵՍՆԵՔ ԽՈՍՔԸ:

10 *Եւ կիրակի օրը լցվեցի Հոգով և իմ հետևից փողի ձայնի պես մի բարձր ձայն լսեցի, Ես եմ Ալֆան եւ Օմեղան, առաջինը եւ վերջինը.*

Հայտ. 2:7 – Ով ականջ ունի, թող լսի, ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին.

*Հռ. 10:8,17 - **8** Իսկ Գիրքն ի՞նչ է ասում. «Խոսքը մոտ է քեզ, քո բերանում և քո սրտում է», այսինքն՝ հավատի խոսքը, որ մենք քարոզում ենք: **17** Ուրեմն հավատը լսելուց է, իսկ լսելը՝ Քրիստոսի խոսքից (rhēma):*

- ***Սատանային չի հետաքրքրում, թե քանի Աստվածաշունչ ունեք ձեր տանը: Նա հարձակվում է այն ժամանակ, երբ Խոսքը մտնում է քո սիրտը:***

  *Ղուկաս 8:12 – Որոնք ճանապարհի եզերքին են, նրանք են, **ովքեր լսում են**, բայց հետո սատանան գալիս և խոսքը նրանց սրտից հանում է, որ չհավատան ու չփրկվեն:*

- ***Պողոսի դարձի գալը կապված է Գործք Առաքելոց 7-ում Ստեփանոսի քարոզը լսելու հետ:***

  Ստեփանոսի վկայությունը իր կյանքի ավարտին...

  *Գործք 7:55-56 – **55** Իսկ նա, Սուրբ Հոգով լցված, դեպի երկինք նայեց ու տեսավ Աստծու փառքը և Հիսուսին՝ Աստծու աջ կողմում կանգնած: Եվ ասաց. **56** Ահա տեսնում եմ երկինքը բացված ու Մարդու Որդուն՝ Աստծու աջ կողմում կանգնած: ...**ամեն աչք կ'տեսնէ նորան***

  Պողոսի վկայությունը նրա դարձի սկզբում...

  *Գործ. 9:7-9 - **7** Իսկ նրան ուղեկցող մարդիկ պապանձված կանգնել էին. ձայնը լսում էին, սակայն ոչինչ չէին տեսնում: **8** Սողոսն էլ վերկացաւ գետնիցը, իր աչքերը բաց անելով ոչ ոքին չէր տեսնում:*

II. ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՏԵՍՆԵԼԸ ՇԱՏ ԽՈՐՆ Է և ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ:

*12 Եւ ես ետ դարձա այն ձայնը **տեսնելու** (blepō), որ ինձ հետ խօսում էր, եւ երբոր դարձա **եօթը ոսկի ճրագակալ տեսա** (eidō). 13 Եւ այն եօթը ճրագակալների մեջտեղում՝ մէկը մարդի Որդու նման, երկարաքղանցք պատմուճան հագած, կրծքին ոսկե գոտի կապած:*

1 Կոր. 1:23 - Մենք էլ քարոզում ենք խաչեալ Քրիստոսը...

Թոմաս Բլեքշիրի «Forgiven» նկարի պատմությունը:

- ***Հայտնության գրքում «տեսա» բառը նշված է 54 անգամ:***

  Հով. 1:51 - Եւ նորան ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, այսուհետեւ կտեսնէք երկինքը բացուած, եւ Աստուծո հրեշտակներին մարդի Որդու վրա ելնելիս եւ իջնելիս:

- ***Աստվածաշունչը խոսում է տեսնելու երկու փուլերի մասին. Ֆիզիկական և հոգևոր, և երկուսն էլ կտրուկ ազդում են ձեր կյանքի վրա:***

  1) *Ծնն. 3:6 – Եւ կինը տեսաւ, որ ծառը լաւ էր ուտելու համար, եւ թէ հաճելի էր աչքերին, եւ փափաքելի է ծառը նայելու համար...*

  2) *Եփ. 1:18 – որ ձեր սրտի աչքերը լուսաւորի...*

- ***Աստծո Խոսքը թափանցում է ձեր սրտերում, որպեսզի կարողանաք տեսնել Հոգու մեջ եղած բաները:***

  *Սաղմոս 34:8 – Ճաշակեցեք և **տեսեք**, որ Տերը քաղցր է.*

- ***Աստծո Խոսքն ըմբռնելու գործընթացը կարող է լինել և՛ուրախալի, և՛ շատ դժվար մարտահրավեր:***

  Հայտնություն 10:9-11 – 9 Ես հրեշտակի մոտ գնացի ու նրան ասացի. Տո՛ւր ինձ այդ գրքույկը: Եվ նա ինձ ասաց. Վերցրո՛ւ և կե՛ր դա, և որովայնիդ մեջ այն կդառնանա, իսկ բերանիդ մեջ մեղրի պես քաղցր կլինի: 10 Եվ գրքույկը

*հրեշտակի ձեռքից վերցրի ու կերա: **11** Եվ բերանիս մեջ մեղրի պես քաղցր էր. երբ կերա, որովայնիս մեջ դառնացավ: Եվ ինձ ասաց. Դու պետք է դարձյալ մարգարեանաս ժողովուրդների, ազգերի, լեզուների և շատ թագավորների մասին:*

III. ԻՆՉ ԵՔ ՏԵՍՆՈՒՄ: ԻՆՉ Է ԱՍՏՎԱԾ ՁԵԶ ՑՈՒՅՑ ՏԱԼԻՍ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ:

*Մարկոս 8:22-25 – **22** Եկան Բեթսայիդա. նրա առաջ բերեցին մի կույրի ու խնդրում էին, որ դիպչի նրան: **23** Հիսուսը կույրի ձեռքից բռնեց, գյուղից դուրս հանեց: Նրա աչքերին թքելով ու ձեռքով դրանց դիպչելով՝ նրան հարցրեց, թե **<u>որևէ բան տեսնո՞ւմ է</u>**: **24** Նա նայեց ու ասաց. **<u>Տեսնում եմ</u>** մարդկանց, որոնք քայլող ծառերի նման են: **25** Հետո դարձյալ ձեռքերը նրա աչքերի վրա դրեց և նրան հստակ **<u>տեսնել տվեց</u>**: Նրա տեսողությունը վերականգնվեց, և բոլորին պարզ տեսնում էր:*

*Հայ. 3:18 - <u>դեղ</u> (egchriō x1) դիր աչքերիդ որ **<u>տեսնես</u>**:*

- ***Կարո՞ղ եմ ձեզ հարցնել, թե ինչ եք տեսնում այս սուրբ գրության մեջ:***

Դ Թագ. 6:17 – Եվ Եղիսեն աղոթք արեց և ասաց. Ո՜վ Տեր, բացի՛ր սրա աչքերը, որ տեսնի: Եվ Տերը բացեց ծառայի աչքերը, և նա տեսավ, որ Եղիսեի շուրջը սարը լիքն էր հրեղեն ձիերով ու կառքերով:

IV. ՀՈԳԱԿԵՔ ԱՅՆ, ԻՆՉ ՏԵՍՆՈՒՄ ԵՔ:

Դ Թագ. 6:16 – Նա էլ ասաց. Մի՛ վախեցիր, որովհետև մեզ հետ եղողներն ավելի շատ են, քան նրանց հետ եղողները:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ